

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությանը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ՆԿԱՐԱԶԱՐԴՎԱԾ ՄՄ 6772 ԱՎԵՏԱՐԱՆԻ
ՄԵԿ ԷԶՐ ԱՐԵՎՄՏԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐՎԵՍԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Բանալի բառեր՝ Մատենադարանի հավաքածու, Նոր Զուղա, ՄՄ 6772 ձեռագիր, Ավետարան, Աստվածատուր Զուղայեցի, Հայրապետ Զուղայեցի, արևմտաքրիստոնեական արվեստ, Աստվածամայր, Հայտնության Տիրամայր, Աստվածածնի Վերափոխման տեսարան:

Ժէ դարում Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով Իրանի Սպահան քաղաքի Նոր Զուղա բնակավայրում հայեր հաստատվեցին: Նոր Զուղա տեղափոխված հայ խոջաները կապեր էին հաստատում տարբեր երկրների առևտրական շրջանակների հետ: Այդ ճանապարհով ստացված եկամուտը ծառայեցվում էր հայկական համայնքում բազմաթիվ ծրագրերի իրականացմանը, մասնավորապես եկեղեցաշինությանը: Եկեղեցիների արտաքին և ներքին հարդարանքում իրանահայ ճարտարապետները գիտակցաբար ներառում էին պարսկական ավանդույթներից տարրեր, իսկ ներքին հարդարանքում կարողանում էին ներդաշնակորեն միաձուլել հայկական, եվրոպական և պարսկական արվեստի տարրերը¹: Այդ ժամանակ կառուցվեցին եկեղեցիներ՝ 1607 թ. Ս. Հակոբ Մծբնեցի Հայրապետը, 1609 թ. Ս. Նազարեթը, 1611 թ. Ս. Գևորգ և Ս. Սարգիսը, 1613 թ. Ս. Աստվածածինը, 1614 թ. Ս. Ստեփանոսը, 1621 թ. Ս. Հովհաննես Մկրտիչը, 1623 թ. Սուրբ Կատարինեն և ուրիշներ²: Տարիների ընթացքում

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ասպիրանտ, arthistoriangreta@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ մարտի 10, 2022, գրախոսելու օրը՝ մայիսի 3, 2022:

1 Առևտրական լայն հնարավորություններ ունեցող խոջաների մեկենասությամբ կառուցված Նոր Զուղայի եկեղեցիները մեծամասամբ պատված էին որմնանկարներով, որում ակնհայտ էր եվրոպական արվեստի ազդեցությունը: Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի և Սբ. Բեթղեմի եկեղեցու որմնանկարներում եվրոպական արվեստի ազդեցությունների մասին մանրամասն տե՛ս **Eftekharian S.**, *Le rayonnement international des gravures flamandes aux XVI^e et XVII^e siècles: Les peintures murals des églises Sainte-Bethléem et Saint-Sauveur à la Nouvelle-Djoufba (Ispahan)*, Université libre de Bruxelles, 2005/2006.

2 **Մ. Առաքելյան**, «Պատկերազարդ Ավետարանների ուսումնասիրությունը Նոր Զուղայի դպրոցի շրջանակներում», *ԲՄ*, հ. 18, 2008, էջ 125: Նոր Զուղայում գրված թվակիր և անթվակիր գրչագրերի ընդհանուր ցանկը տե՛ս **Լ. Մինասյան**, *Գրչութիյան արվեստը Նոր Զուղայում*, Նոր Զուղա, 1991, էջ 77-121:

Նոր Զուղայում սկիզբ դրված եկեղեցաշինությունը զուգահեռ ստեղծվում էին գրչատներ, որտեղ սկզբում ընդօրինակվում էին Հին Զուղայից տեղափոխած և արդեն համայնքում եղած ձեռագրերը, հետագայում ստեղծվեցին նոր ձեռագիր մատյաններ, Աստվածաշնչեր, նկարագրողվեցին մի շարք Ավետարաններ: Նոր Զուղայում և հարակից շրջաններում գրված և նկարագրողոված ձեռագրերից շատերը բազմաթիվ ճանապարհներով հասել են աշխարհի տարբեր անկյուններ, որոնք, համաձայն Միքայել Առաքելյանի, այժմ գտնվում են 16 երկրների 36 հավաքածուներում և ընդհանուր թվով 230-ն են. 177-ը պատկանում են, իսկ մնացյալ 53-ը վերագրվում են Նոր Զուղային³: Այժմ Մաշտոցյան Մատենադարանում պահվում են Նոր Զուղայում գրված Աստվածաշունչ մատյաններ, Ճաշոցներ, Մաշտոցներ, Շարակնոցներ, Քարոզգրքեր, Տաղարաններ, Խորհրդատետրեր, Հայսմավուրքներ, բազմաբնույթ ժողովածուներ, ինչպես նաև նկարագրող Ավետարաններ⁴: Այդ Ավետարանների մեջ իր յուրահատուկ ոճով և գեղարվեստական լուծումներով առանձնանում է ՄՄ 6772 ձեռագիրը:

Մեր ուսումնասիրությունյան առարկա ՄՄ 6772 Ավետարանի ծաղկողը Աստվածատուր սարկավազն է, որին Աստղիկ Գևորգյանը հիշատակում է նաև որպես Աստվածատուր Զուղայեցի: Նա եղել է Հայրապետ ծաղկողի աշակերտը: Նրանք երկուսն էլ ստեղծագործել են Նոր Զուղայում և երբեմն նույն ձեռագիրը նկարագրող էլ են միասին⁵: Այս հանգամանքը կասկածի տեղիք է տալիս, քանի որ շատ բարդ է լինում հասկանալ, թե նրանցից ով է եղել տվյալ տեսարանի ծաղկողը: «Հայ մանրանկարիչներ» մենագիտություն՝ Աստվածատուր Զուղայեցու ՄՄ 6772 ձեռագրի նկարագրությունյան ծանոթագրություններում նշված է, որ ձեռագրի նկարագրումանը մասնակցել է նաև Հայրապետը: Իսկ նույն գրքում Հայրապետ Զուղայեցու ձեռագրերի ցանկում ՄՄ 6772 Ավետարանի մասին տեղեկություն, որ, թեպետ հիշատակարանում որպես ծաղկող գրված է միայն Աստվածատուրի անունը, սակայն տերունական նկարները հավանաբար նկարել է Հայրապետը⁶: Այս առիթով մեջբերենք ձեռագրի 336ա էջում առկա հետևյալ հիշատակարանը. «Դարձեալ յիշեցեմ ի Քրիստոս զաշխատող սբ. Աւետարանիս զպարոն Մարտիրոսն, պարոն Ստեփաննոսն եւ մահրասի Սահակն, զՄիրզախանն եւ զԱստուածատուր սարկավաքն, որ ծաղկեաց սբ. Աւետարանս» (ընդգծումը մերն է): Այս տողերից, կարծես, կասկած չի առաջանում, որ

³ Մ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 128:

⁴ Ընդհանուր ցանկը տե՛ս Գ. Տէր-Վարդանեան, Նոր Զուղայի եւ յարակից շրջանների հայկական ձեռագրական արուեստը (Նիսպեր Մաշտոցեան Մատենադարանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ցուցահանդեսների, հուլիս օգոստոս), Երևան, 2005, էջ 133-149:

⁵ Ա. Գևորգյան, Հայ մանրանկարիչներ մատենագիտություն IX-XIX դդ., Կահիրե, 1998, էջ 62:

⁶ Ա. Գևորգյան, նույն տեղում էջ 333:



Նկ. ա. ՄՄ Հ^մ 6772 Ավետարան,
Մանկանց կոտորածը, 39 ք

Ավետարանի ծաղկողը Աստվածատուրն է, սակայն 39ք էջում (նկ. ա) պատկերված «Կոտորումն մանկանց» մանրանկարի շրջանակի ստորին գոտում առկա է հետևյալ արձանագրությունը. «ՋՄԵՂ(Ա)Ի(Ո)Ր Հ(Ա)ՅՐ(Ա)Պ(Ե)Տ: ՆԿ(Ա)ՐՕՂՍ Յ(Ի)ՇԵՑ(Ե)Ք Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս: ՈՎ Հ(ԱՅ)ՐՔ»: Այս երկու հիշատակությունների առկայության և սովյալ ձեռագրի ծաղկողի առնչությամբ առաջ եկած հարցը մեր հետագա ուսումնասիրության շրջանակում է:

Մաշտոցյան Մատենադարանում պահվում է Աստվածատուր Ջուղայեցու նկարազարդած երեք ձեռագիր, որից միայն ՄՄ 6772 Ավետարանի տերունական շարքի մանրանկարների 18ա էջում է առկա այսպես կոչված Աստվածածնի Վերափոխման տեսարանը: Այն ներկա-

յացված է մեկ ամբողջական էջի տեսքով (նկ. 1)*:

Արևմտաքրիստոնեական արվեստում նկատել ենք Աստվածածնի Վերափոխման տեսարանի պատկերագրության մի քանի տարբերակ, որոնցից հիմնականում գերակշռում է երկմաս կառուցվածք ունեցողը: Ըստ առաջին տարբերակի՝ հորինվածքը բաժանված է երկու մասի, վերևում մանդոլայի մեջ աղոթողի դիրքում պատկերված է Տիրամայրը, կողքին երկուական հրեշտակներ, որոնք բարձրացնում են Աստվածածնին, իսկ ներքևում մարդկանց բազմությունն է, որոնց հայացքներն ուղղված են դեպի Տիրամայրը: Ստորին հատվածում կանգնած մարդիկ ընդգծված զարմացած հայացք ունեն: Այս տարբերակի ամենավառ օրինակներից են Նեապոլի Մայր տաճարում գտնվող Պերուջինոյի որմնանկարը (1506 թ.), Միլանի Ամբրոջիո դի Ստեֆանո դա Ֆոսանո (Ambrogio di Stefano da Fossano) եկեղեցում իտալացի նկարիչ Բերգոնյոների կտավը (1511 թ.), Վենետիկի Սանտա Մարիա Գլորիոզա դեի Ֆրարի բազիլիկայի (Basilica di Santa Maria Gloriosa dei Frari) խորանում գտնվող հռչակավոր Տիցիանի աշխատանքը (1515-1518 թթ.): Ըստ երկրորդ տարբերակի՝ հորինվածքը կրկին երկմաս կառուցվածք ունի, որի վերին հատվածը մեծամասամբ նման է առաջինին, սակայն ստորին հատվածում ներկայացվում էր դատարկ

* Այս և նկարներ 2, 3 տե՛ս ներդիրում:

դագաղը, և արդեն դրա շուրջ էին խմբված դեպի վեր նայող կերպարները: Այս տարբերակը, թերևս, ամենալայն տարածում գտած պատկերագրական տիպերից է: Նույնօրինակ հորինվածք հանդիպում են գերմանացի հայտնի նկարիչ Ալբրեխտ Դյուրերի փորագրանկարներում (1510 թ.), Պինտուրիչոյի նկարած Հռոմի Սանտա Մարիա դել Պոպոլո (Santa Maria del Popolo) տաճարի խորանի արևմտյան պատի Աստվածածնի Վերափոխման տեսարանում (1489–1491 թթ.), կամ օրինակ, հայկական մանրանկարչության մեջ հայտնի Սարգիս Խիզանցու ՄՄ 6420 ձեռագրի նույնանուն մանրանկարում (1604 թ.):

Տարբեր դարաշրջաններում նկարագրագրված ձեռագրերում ինչպես հետագոտող մասնագետները, այնպես էլ մենք որոշակի օրինաչափություն ենք նկատել «Տիրամոր նինջը» տեսարանի պատկերագրության մեջ: Եթե զարգացած միջնադարում ստեղծված ձեռագրերի այդ տեսարանի վերնամասում հանդիպում էր «Ննջումն Աստվածածնի» կամ «Վերափոխումն Աստվածածնի» մակագրությունը (ինչպես օրինակ հայկական ձեռագրարվեստում՝ ՄՄ 2743 294ա, ՄՄ 4845 ճա, ՄՄ 5786 Յա), ապա ԺԶ դարից սկսած և հատկապես ԺԷ-ԺԹ դարերում եվրոպական գեղանկարներում նկատվում է Աստվածածնի Վերափոխման՝ որպես առանձին հորինվածքի ներկայացումը (Ռուբենս, Տիցիան, Մուրիլիո, Աննիբալե Կառոաչի և այլք): Աստվածամոր կյանքին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Թամար Տասնապետյանը գրում է. «Մարիամի երկուստ վերջին վերաբերող Աւանդութեան մէջ, գրեթէ երկու հոսանքներ կան. մէկը կը հաստատէ իրական մահը, Քրիստոսի մահուան յարեւ նման, յետոյ վերափոխում մը որ միաժամանակ յարութիւն մը եւ իր մարմինն եւ իր հոգիին բարձրացումն է. . . Ուրիշ հոսանք մը Կոյսի վերջին մասին կ'սէ թէ ան «ննջում» մըն է, առանց իրական մահուան, միայն առեւտ, որ իր Վերափոխումն անմիջապէս առաջ կու գայ»: Հետևաբար պետք է ենթադրել՝ դա է պատճառը, որ ԺԶ-ԺԶ դարերում ծաղկողները էական տարբերություն չէին դնում երկու մակագրությունների միջև, քանի որ, ըստ էության, Աստվածամոր Վերափոխման պատմության մի դրվագն է համարվում Աստվածամոր նինջը, որին հաջորդում է նրա երկինք վերափոխվելը, թագադրությունը և գահին բազմելը: Այս օրինաչափությունը, սակայն, նկատելի փոփոխություններ է կրում ու չմիջնադարում՝ առավելապես ԺԷ դարում:

Ուսումնասիրելով նույն ժամանակահատվածում եվրոպական երկրներում ստեղծված նմանօրինակ պատկերագրություն ունեցող տեսարանը՝ նկատում ենք, որ ԺԷ դարի իսպանական արվեստում առաջնահերթությունը տրվում էր Անարատ հղություն կոչվող պատկերատիպին, որը կարճ ժամանակահատվա-

⁷ Թ. Տասնապետեան, Կինը սուրբ հոգիին առաքելութեան մէջ, Բ. «Կոյս Մարիամին Վերափոխումը», Անթիլիաս, 1997, էջ 9:

ծում լայն տարածում գտավ: Պատկերագրական այս տիպը աստվածաբանական մեկնաբանությունն ստացավ 1649 թ. իսպանացի նկարիչ, արվեստի քննադատ Ֆրանսիսկո Պաչեկոյի հրատարակած «Գեղանկարչության արվեստ» աշխատության մեջ, որի գլխավոր դրույթները հիմնված էին Հովհաննես Ավետարանչի Հայտնության գրքի ԺԲ գլխի 1-ին տան վրա, որով էլ ձևակերպվում էր «Հայտնության կամ Ապոկալիպսիսի Տիրամայրը» պատկերագրական նոր տեսակը: Պատկերագրական այս տիպը ընդհանրապես նոր չէր ուշ միջնադարի համար, քանի որ ԺԳ դարում իտալացի փրիլիսոփա, աստվածաբան Սուրբ Բոնավենտուրան (իրական անունը՝ Ջովաննի դի Ֆիդանցա) կապել էր այն կույս Մարիամի հետ: Այն հայտնի էր դեռևս զարգացած միջնադարից սկսած, սակայն մեծամասամբ լայն տարածում գտավ հենց Պաչեկոյի շնորհիվ⁸:

1658-1659 թթ. Աստվածատուր ծաղկողի նկարագրողած խնդրո առարկա մանրանկարի կենտրոնում կարմիր հագուստով և կապույտ թիկնոցով աղոթողի դիրքում պատկերված է Տիրամայրը, որը կանգնած է ամպերի վրա զետեղված լուսնի մահիկին: Ոսկե ետնախորքին լուսնի վրա կանգնած Աստվածամոր պատկերն առնչվում է Հայտնության գրքի հետևյալ հատվածի հետ. «Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի արկեալ զիւրեւ զարեգակն, եւ լուսին ի ներոյ ոտից նորա. եւ ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յերկոտասանից»: Հետաքրքրական է, որ Գևորգյանը այս տեսարանը մեկնաբանում է որպես Աստվածամոր Վերափոխում, սակայն, հիմնվելով Պաչեկոյի վերոնշյալ տեսակետի վրա, կարծում ենք, որ Աստվածամոր պատկերագրական այս տիպը կապվում է հենց Հայտնության գրքի մեջբերված հատվածի հետ և կոչվում է Հայտնության Տիրամայր: Աստվածաշնչի բազմաթիվ տպագիրներում Հայտնության գրքի պատկերագրողման հիմք է հանդիսացել ԺԵ դարի Հյուսիսային Վերածննդի նշանավոր նկարիչ Ալբրեխտ Դյուրերի «Ապոկալիպսիս» կոչվող շարքը⁹, սակայն ՄՄ 6772 Ավետարանում Աստվածամոր պատկերը ինքնատիպ է իր առանձին հորինվածքի և մյուս մանրամասների շնորհիվ:

Աստվածամոր շուրջը երկու շարքով երկուսական հրեշտակներ են: Կարմիր և նարնջագույն ծալազարդումներով հագուստներով ծնրադիր հրեշտակներին՝ դեպի վեր ուղղված հայացքները ստեղծում են երկինք վերափոխվելու գործողության տպավորությունը: Նրանք երկուսով հպվել են Տիրամոր կապույտ թիկնոցին և դեմքի խաղաղ արտահայտությամբ կարծես հետևում են

⁸ Д. Холл, *Словарь сюжетов и символов в искусстве*, Москва, 1996, сс. 191-192.

⁹ Դյուրերի տվյալ փորագրանկարների շարքը շրջադարձային երևույթ են նկարագարող գրեթե պատմության մեջ, որոնք դարեր շարունակ ոգեշնչել են ոչ միայն Արևմտյան Եվրոպայի նկարիչներին, այլ նաև հայ մանրանկարիչներին: Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Սիմոնյան, «Հայտնության փորագրապատկերները Ոսկան Երևանցու և Թովմա Վանանդեցու հրատարակություններում», ԼՀԳ, 2018, և. 3, էջ 282:

ընթացքին: Այս ամենին զուգահեռ վերին երկու հրեշտակներն իջեցնում են աստղաձև մանրամասներ ունեցող թագը: Ընդհանուր հորինվածքի առանցքային կերպար համարվող Տիրամոր այս պատկերի շնորհիվ, փաստորեն, համատեղվում են Աստվածամոր Հայտնության և թագադրության տեսարանները:

Նոր Զուղայի Ս. Բեթղեհեմ եկեղեցու հյուսիսային պատի որմնամուկներից մեկի վրա պատկերված է, ինչպես ստորին եզրագոտու մակագրությամբ է նշվում, «Վերայփոխումն Մարիամ» (նկ. ք), սակայն քննության ենթակա մանրանկարի մեզ արդեն ծանոթ էջի նմանությամբ կրկին նկատում ենք, որ այստեղ Աստվածամայրը կանգնած է լուսնի մահիկի վրա և գլխի շուրջը լորը խմբված են աստղերը, այսինքն այստեղ կրկին գործ ունենք Հայտնության Տիրամայրը տարբերակի հետ: Փաստորեն, նոր Զուղայի Ս. Բեթղեհեմ եկեղեցու որմնանկարում, ինչպես նաև նույն միջավայրում ստեղծագործած Աստվածատուր Զուղայեցու նկարազարդած այս մանրանկարներում նմանօրինակ տեսարանի առկայությունն անշուշտ պետք է որոշակի ազդեցություններով պայմանավորված լիներ:

Արվեստաբան Արփինե Սիմոնյանը, հայագետներ Ավեդիս Սանջյանը, Սիլվի Մերիանը, Բեզալել Նարքիսը նկատել են հետևյալ օրինաչափությունը. ժէ դարից սկսած նկարազարդ ձեռագրերի մանրանկարները կարող էին ազդված լինել հիմնականում եվրոպական փորագրանկարներից և եվրոպայում ստեղծված տպագիր գրքի նկարազարդումներից (Քրիստոֆել վան Զիլեսեմ Կրտսեր, Ալբրեխտ Դյուրեր և այլք)¹⁰: Նշենք, որ մենք փորձել ենք հնարավորինս դիտարկել



Նկ. ք. Աստվածամոր Վերափոխումը, նոր Զուղայի Ս. Բեթղեհեմ եկեղեցի, 1628 թ.

¹⁰ Եվրոպական փորագրանկարների ոճով հայկական ձեռագրերի նկարազարդումը սկսվում է ժէ. դարի առաջին քառորդում: Եվրոպական արվեստի այս շարժումը սկիզբ առավ Լեհաստանից և անցավ Կոստանդնուպոլիս, Սպահան, Սանկտ Պետերբուրգ: Այս շարժման կարևորագույն ներկայացուցիչն էր գրիչ-մանրանկարիչ Ղազար Բաբերդացին: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Սիմոնյան, «Մաշտոցյան Մատենադարանի ՀՊՐ 3807 խորհրդատետրի տեղումնական մանրանկարների փոխառնչությունները Վանանդեցիների հրատարակությունների փորագրանկարների հետ», *Հայագիտական հանդես*, № 1(46), Երևան, 2020, էջ 127, A. Sanjian, *Medieval Armenian Manuscripts at the University of California*, Los Angeles

դեռևս ավելի վաղ ստեղծված տպագիր գրքի օրինակներ: Այդ շրջանում ամենաշատ ընդօրինակություն ունեցող ստեղծագործություններից են Վան Զիխեմի փորագրանկարները: Խնդրո առարկա մանրանկարի ծաղկողի գեղանկարչական մոտեցումն ու ոճը ստիպում են ենթադրել, որ այս տեսարանն ավելի շուտ ազդված է գեղանկարչական որևէ օրինակից, քան տպագիր գրքից: Այս պատկերին մասնակիորեն անդրադարձած արվեստաբան Քնարիկ Ավետիսյանը, բնութագրելով նրա պատկերագրությունը որպես «Անարատ հղություն», առաջ է բերում Թամարա Զնամերովսկայայի այն տեսակետը, ըստ որի այս տեսարանը զուտ իսպանական է: Այն լայն տարածում է գտել ժէ դարի արվեստում, և որպես նշանավոր գործեր թվարկում է Խուսեպե Ռիբերայի, էլ Գրեկոյի, Բարտոլոմեո Մուրիլիոյի աշխատանքները, այնուհետև նշում, որ պատկերագրական այս տարբերակի հիմքի վրա հայ արվեստում ստեղծվել են ուշագրավ գործեր, որոնցից է ՄՄ 6772 Ավետարանի տվյալ էջը¹¹: Այս տեսարանին բնորոշ տարրերով որոշ նմանություններ տեսնում ենք միայն Ռիբերայի աշխատանքում: էլ Գրեկոյի համանուն ստեղծագործությունը պատկանում է երկմաս կառուցվածք ունեցող պատկերագրական տիպին, որն արդեն իսկ տարբերվում է խնդրո առարկա մանրանկարի հորինվածքից, իսկ Մուրիլիոյի նույնանուն գեղանկարներում, թեպետ ներկայացված է լուսնի մահիկի վրա կանգնած Տիրամայրը և հրեշտակները, սակայն բացակայում է աստղերից կազմված թագը, որն այս տեսարանի կարևոր բնորոշիչներից է համարվում: Փաստորեն, իսպանական արվեստի նշանավոր ստեղծագործությունների հետ առնչությունները այդքան էլ սերտ չեն:

Առևտրական լայն հնարավորություններ ունեցող նորջուղայեցիներից շատերը հնարավորություն ունեին առնչվելու եվրոպական մի շարք քաղաքների հարուստ վերնախավի հետ, ինչը և նպաստեց, որ իրենց ժամանակի նորարարությունների կրողները դառնան: Քննության ենթակա ՄՄ 6772 ձեռագրի թվականը (1658-59 թթ.) հուշում է, որ մինչ այս ձեռագրի ստեղծումը նորջուղայեցիները բավական ակտիվ գործունեություն են ծավալել իտալական տարբեր քաղաքներում: Ժէ դարի երկրորդ կեսից Վենետիկի և իտալական մի շարք քաղաքների տպարաններ սկսում են հայերեն գրքեր տպագրել հայ մեկենասների պատվերներով: Հայերեն գրքեր էին հրատարակում Ջովաննի Բատիստա Պովի-

(with contributions by *Alice Taylor* and *Sylvie L. Merian* and with the assistance of S. Peter Cow), vol. 14, University of California press, Berkeley, Los Angeles, London, p. 43, **B. Narkiss, M. Stone**, *Armenian art treasures of Jerusalem*, New York, 1979, p. 94-96; **S. Merian**, "Illuminating the Apocalypse in Seventeenth-Century Armenian Manuscripts: The Transition from Printed Book to Manuscript," *The Armenian Apocalyptic Tradition*, Leiden – Boston: Brill, 2014, pp. 603-639.

¹¹ **Ք. Ավետիսյան**, *Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում*, Երևան, 2015, էջ 216:

սը, Միքելանջելո Բարբոնին, Անտոնիո Բորտոլին և այլք¹²: Մեզ թվում է, որ ՄՄ 6772 Ավետարանի պատկերն ավելի շատ պայմանավորված է իտալական գեղանկարչության ազդեցությամբ: Դիտարկենք խնդրո առարկա տեսարանի հետ առավել շատ առնչություններ ունեցող ժէ դարաի իտալացի նկարիչ Ամադեո Պերուչինոի վրձնին պատկանող il-Madonna ta' Pinu կամ «Աստվածամոր Վերափոխումը» կոչվող ստեղծագործությունը (նկ. 2): Այն ստեղծվել է 1619 թ. Պինու Գաուչիի հովանավորությամբ, հետագայում տեղադրվել Տա Պինու եկեղեցու խորանապատնեշին: Այստեղ կրկին գործ ունենք Աստվածածնի Վերափոխման՝ առավել մեծ տարածում գտած երկմաս կառուցված ունեցող հորինվածքի հետ, որի ստորին հատվածում ներկայացված է դատարկ դագաղը և շուրջը խմբված են առաքյալները: Սակայն գեղանկարի վերին՝ ավելի մեծ հատվածում պատկերված է կարմիր և կապույտ ծալագարդումներով թիկնոցով Տիրամայրը՝ ձեռքերն աղոթողի դիրքում պահած և հայացքն ուղղած դեպի աջ: Նրա երկու կողմերում երկուական հրեշտակներ են, որոնցից երկուսը նրան վեր են բարձրացնում, իսկ վերին գոտու երկու հրեշտակները իջեցնում են թագը: Այսպիսով, որպես ոսկե խորք ծառայած «արեգակն, եւ լուսին ի ներքոյ օտից նորա», այսինքն լուսնի մահիկի վրա կանգնած լինելու հանգամանքը հուշում է, որ գործ ունենք Հայտնության Տիրամայրը պատկերագրական տիպի հետ: Այն կրկին համադրված է Աստվածամոր թագադրության տեսարանով, ինչպես ՄՄ 6772 Ավետարանի քննության ենթակա օրինակը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում համոզվել ենք, որ պատկերագրական և հորինվածքային առանձնահատկություններով յուրահատուկ այս մանրանկարը միակն է Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում պահվող Նոր Զուղայի նկարազարդ Ավետարանների շարքում: Այս հանգամանքը հիմք է տալիս կարծելու, որ

ա) Պատահական երևույթ չէր ժՁ-ժէ դարերում Արևմտյան Եվրոպայում առավել լայն տարածում գտած պատկերագրական այս տիպի ի հայտ գալը հենց Նոր Զուղայում նկարազարդված Ավետարանի էջերում:

բ) Քննության ենթակա տեսարանի առկայությունը տվյալ ձեռագրի ծաղկողի անհատական մոտեցման արդյունքն է:

գ) Քանի որ նկարազարդ Ավետարաններում մեծամասամբ պատկերվում էին տերունական շարֆի տեսարանները, Աստվածամոր Հայտնության և թագադրության համատեղ ներկայացված տեսարանը կարող էր պատկերվել այլ տեսակի մատյաններում, ինչպիսիք են Աստվածաշունչը, Ճաշոցը, Քարոզգրքերը և այլն: Որպես ասվածի օրինակ պետք է նշել խնդրո առարկա

¹² Ա. Ենֆյան, «Հայ տպագիր գրքի փորագրապատկերների ազդեցությունը Հովնաթան և Մկրտում Հովնաթանյանների արվեստում», էջմիածին, 2017, ժԱ., էջ 71:

մանրանկարի հետ ակնհայտ նմանություններ ունեցող ՄՄ 981 ճաշոցի¹³ 413ա էջի (նկ. 3) պատկերը:

դ) Երկմաս կառուցվածք ունեցող «Վերափոխումն Աստվածածնի» տեսարանը լայն տարածում էր գտել, մինչդեռ պատկերագրական այս տիպը մեծ հանաչում չունեւ:

Այսպիսով, Մատենադարանի հավաքածուում առկա Նոր Զուղայում ստեղծված ձեռագրերից միայն Աստվածատուր Զուղայեցու ՄՄ 6772 Ավետարանում է հանդիպում Աստվածամոր Հայտնության և թագադրության համատեղ պատկերումը, ինչը պատահական չէր Նոր Զուղայի պատմական այս ժամանակահատվածի համար: Այս փաստը կապում ենք ժամանակի խոշոր կենտրոն համարվող Սպահանի, վաճառականների առևտրական հարաբերությունների և ճանապարհորդությունների շնորհիվ տարբեր երկրների արվեստին ծանոթ լինելու հանգամանքի հետ: Դրա արդյունքում ձևավորվում էր մի միջավայր, որում գերակշռում էր եվրոպական արվեստի ազդեցությունը: Այդ ազդեցությունները դրսևորվում էին տարբեր բնագավառներում: Ժէ դարում Նոր Զուղայի ծաղկողների շրջանում նկատելի օրինաչափություն է դառնում մանրանկարչության մեջ առավել ազատ ստեղծագործելու հակումը, թեմաների բազմազանությունը, ավանդական պատկերագրությունից դուրս որոշ ատրիբուտների ներմուծումն ու ոճական առանձնահատկությունները, որոնցով այսօր հայկական մանրանկարչության մեջ առանձնանում է Նոր Զուղայի դպրոցը: Ասվածի վառ օրինակ է Ժէ դարում Նոր Զուղայում նկարագրողված ձեռագրի խնդրո առարկա մանրանկարն իր յուրատիպ պատկերագրությամբ: Ուստիև, վերջինիս հանգամանքով պայմանավորված, սույն ուսումնասիրությամբ փորձ արվեց գտնել զուգահեռներ հայկական և եվրոպական արվեստի ստեղծագործություններում ինչպես ձեռագիր Ավետարանների և տպագիր գրքի, այնպես էլ եկեղեցական հարդարանքի մաս հանդիսացող որմնանկարների և գեղանկարների օրինակներում:

¹³ ՄՄ 981, ճաշոց, 1653 ք., էջմիածին, գրիչ՝ Ստեփաննոս ֆիյ., ծաղկող՝ Նահապետ դպիր, Ալեքսիանոս: Ստացող՝ Եարիխան, Փիլիպպոս կաթողիկոս: Տե՛ս Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Օ. Եգանեան, խմբագրությամբ՝ Փ. Անթարեան, Յ. Քէօսէան, Ա. Ղազարոսեան, Տ. Շահէ Քհչ. Հայրապետեան, Մազաղաթ, Երևան, 2007, էջ 832:

GRETA GASPARYAN

**A PAGE OF THE GOSPEL IN M 6772 IN THE CONTEXT
OF WESTERN CHRISTIAN ART**

Keywords: Collection of Matenadaran, New Julfa, MS M6772, Gospel, Astvatsatur Jughayets'i, Hacob Jughayets'i, Western Christian art, Mother of God, Woman of Apocalypse, Scene of the Assumption of the Virgin Mary.

As a result of the great deportation of Armenians by Shah Abbas in the 17th century, Armenians settled in New Julfa, where they copied the manuscripts which they brought from Old Julfa. Later on new manuscripts were created. Many manuscripts illuminated in New Julfa are preserved in different parts of the world, also at Matenadaran. Among them Ms M6772 is distinguished for its unique style and artistic solutions.

There are three manuscripts illustrated by Astvatsatur Jughayets'i in the Matenadaran collection. As some scholars opine, only M6772 which is a Gospel contains the scene of the Assumption of the Virgin Mary (fol. 18r). The miniature is unique for its pictorial and compositional features. In fact this scene is not the Assumption of the Virgin but an iconographic type associated with The Book of Revelation (12:1): "A great sign appeared in heaven: a woman clothed with the sun, with the moon under her feet and a crown of twelve stars on her head." The iconography of the miniature bears the influence of Italian art; it is closely related to *Il-Madonna ta' Pinu* by the Italian painter Amadeo Perugino (17th century). Such influence should be viewed in the context of cultural connections of New Julfan Armenians with Western Europe, since they managed to establish numerous trade relations with European partners. This would leave its mark on art.

ГРЕТА ГАСПАРЯН

**СТРАНИЦА ЕВАНГЕЛИЯ М 6772 В КОНТЕКСТЕ
ЗАПАДНО-ХРИСТИАНСКОГО ИСКУССТВА**

Ключевые слова: Коллекция Матенадарана, Новая Джульфа, рукопись М 6772, Евангелие, Аствацатур Джугаеци, Акоп Джугаеци, западнохристианское искусство, Богородица, жена Апокалипсиса, иконографический тип Вознесение Богородицы.

В результате депортации, организованной шахом Аббасом в XVII веке,

армяне обосновались в Новой Джульфе, где копировали рукописи, перекочевавшие из Старой Джульфы и уже существовавшие в общине, а позднее стали создавать новые. Множество рукописей, иллюстрированных в Новой Джульфе, оказались в разных уголках мира, в том числе в Матенадаране. Среди них рукопись М6772 выделяется своим неповторимым стилем и художественным решением.

В Матенадаране хранятся три рукописи, иллюстрированные Аствацатуром Джугаеци. На листе 18а Евангелия М 6772, по мнению исследователей, изображена сцена Вознесения Богородицы. Эта миниатюра уникальна в живописном и композиционном отношении. На самом деле эта сцена – не Вознесение Богородицы, а иконографический тип, связанный с Откровением Иоанна (12:1): “И явилось на небе великое знамение: жена, облеченная в солнце; под ногами ее луна, и на главе ее венец из двенадцати звезд”. В иконографии миниатюры усматривается влияние итальянского искусства, а именно полотна “П-Madonna ta' Pinu”, принадлежащего кисти итальянского художника XVII века Амадео Перуджино. Такое влияние следует рассматривать в контексте культурных связей армян Новой Джульфы с Западной Европой: активные торговые отношения с европейцами оставили свой след и в искусстве.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինքնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիլիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելսարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարոյ մի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանուշ Բեգլարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS
HISTORY**Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants' in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians' Attempts to Revive the Economy in Adana Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY**Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat'ets'i as the First Samples in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion [of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants'i133

Hasmik Badalyan

Dzorovank' Monastery of Cilician Armenia and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта 215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана 225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зограб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви..... 259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) 299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
 в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
 календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
 Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում
Ք. Երևան, Ներսիսյան 1
Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5
տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝
banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/